

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Վերժինե Սվազյան

Բանասիրական գիտությունների դոկտոր,
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող
<http://www.geocities.com/vsvaz333/>
vsvaz333@yahoo.com

Երկքաղաքացիություն. Տնտեսական և Սոցիալական հետևանքները
ՀՄՔՀԽ համագումար

Հունիսի 17-18, 2006թ.
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համառոտ ակնարկ

1915-1922 թթ. Հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհի տարբեր երկրներ սփռված արևմտահայության որոշ մասը պարբերաբար (1920-1930-ական թթ., 1946-1948 թթ., 1962-1965 թթ.) հայրենադարձվել է Մայր Հայաստան: Սովետական Հայաստանում հայրենադարձները դիմագրավել են տնտեսական, քաղաքական, իրավական և բարոյահոգեբանական դժվարություններ: Այդուհանդերձ, նրանց մշակութային-մասնագիտական զարգացումը և հասարակականորեն հարմարվելու կարողությունը, ընթանալով մերձեցման ուղղությամբ, դառնում է հայ ժողովրդի ազգային ինքնահաստատման և ամբողջականության բաղադրիչ մասը:

Երիտթուրք կառավարության նախօրոք ծրագրած և 1915 թ. կազմակերպած բռնի տեղահանությունների և ցեղասպանության հետևանքով արևմտահայությունն արտաքսվեց իր բնօրրանից՝ կորցնելով իր պատմական հայրենիքը: Նա քվեց Սուրուճի, Ռաս ուլ Այնի, մեսքենեի, Ռաքքայի, Տեր Ջորի և այլ անապատներ՝ թուրքական յաթաղանին զոհ տալով իր գենոֆոնդի ստվար մասը՝ 1,5 միլիոնից ավելին, իսկ հրաշքով փրկվածները ցրվեցին աշխարհի տարբեր երկրներ՝ հանապազօրյա ապրուստ հայթայթելու: Ստեղծվեց Հայ Սփյուռքը որպես պատմական իրողություն:

Պապենական հողերից արմատախիլ եղած հայ տարագիրներն անձանոթ երկրներում, անտեղյակ օտար լեզուներին և օրենքներին, սոսկ էժան աշխատուժ էին, ինչքան էլ որ օտարների հիացմունքին արժանանային հայկական տոհմիկ արհեստավորների՝ դերձակների, կոշկակարների, ոսկերիչների, երկաթագործների հմուտ վարպետությունը և կամ շնորհալի հայ կանանց ասեղնագործություններն ու նրանց գործած նախշազարդ գորգերը:

Այնինչ օտարության մեջ ձուլումի, այլասերումի և մանավանդ գործազրկության սարսափները հանգիստ չէին տալիս աստանդական հայերին: Եվ որպես սփոփանք հյուսվում էին հայության հայրենակարոտ երգերը.

*Չեռացեր են տունես-տեղես,
Կորուցեր են հարազատներ,
Կարոտ մնացեր հայրենիքես.
Չամբերե՛, հոգի՛ս, համբերե՛:*

*Օտարության մեջ ինկեր ենք,
Կուլամ կարոտո՞վ-կարոտո՞վ.
Չայ խնդիրը լուծվեր շուտով.
Չամբերե՛, հոգի՛ս, համբերե՛:*

*Ուրախացիր, մի՛ լար տխուր,
Ոտքիդ վրա կայնի՛ր ամուր.
Շուտով կլսես ներգաղթի լուր.
Չամբերե՛, հոգի՛ս, համբերե՛:¹*

Ներգաղթի իրարհաջորդ քարավաններով սկսվում է անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայության ներգաղթը դեպի Արևելյան Հայաստան: Նախ՝ 1920-1930-ական թվականներին Կ. Պոլսից, Ֆրանսիայից և Հունաստանից, ապա՝ 1946-1948 թթ. զանգվածային ներգաղթը Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Ֆրանսիայից, Հունաստանից, բալկանյան երկրներից, Ամերիկայից, և ի վերջո՝ 1962-1965 թթ. Եգիպտոսից, Կիպրոսից և Իրանից: Ըստ այդմ ստեղծվում են կարոտախտի երգեր.

*Կարոտցեր են քեզի, շքեղ Երևան,
Շատ ծովերեն բարձր ոսկե լիճ Սևան,
Ձկներ ունիս խորքումդ՝ կողակ ու իշխան,
Չոգիս վկա լինի, կյանքս քեզ կուտամ:*

*Չե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Հայաստան,
Չե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:*

*Երևա՛ն, սիրելիս, դու միշտ անսասան,
Շրջապատված ունիս այգի, բուրաստան,
Օդդ, ջուրդ՝ անուշ, տեսքդ՝ անմման,
Ով չի սիրում քեզի՝ հայ չէ իսկական:*

*Չե՛յ ջան, Երևա՛ն, դու իմ Հայաստան,
Չե՛յ ջան, հե՛յ ջան, սիրուն Երևան:²*

Հայրենադարձները Մայր Հայաստան էին գալիս լի հույսերով ու խանդավառությամբ: Նրանք գալիս էին երգելով «Սովետական ազատ աշխարհի Հայաստան...» օրհներգի արժեք ունեցող երգը: Նրանք գալիս էին իրենց հայրենի քույր եղբայրների հետ ձեռք-ձեռքի տալու և Երկրորդ աշխարհամարտից Հայրենիքի ստացած վերքերին սպեղանի դնելու:

¹ Սվազյան Վերժինե, *Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը*, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 202:

² Անդ, էջ 203:

Այդ վեհ և ազնիվ նպատակի համար բանվորները բերում էին իրենց բազկի ուժը, արհեստավորները՝ իրենց ձեռքի շնորհքը, մտավորականները՝ իրենց գիտելիքները, հարուստները՝ իրենց ունեցվածքն ու գործարանները, ծնողները՝ իրենց զավակներին...

*Հայաստան երթալու եմ,
Մշտական մնալու եմ,
Ես ի՞նչ ընեն օտար աշխարհ.
Ահա կերթամ Հայաստան:³*

Գալիս էին հայրենադարձների խուռներան քարավանները՝ ոգեշնչված պատերազմում էսորհրդային Միության տարած հաղթանակով և մանավանդ նրա 1945 թ. նոյեմբերի 1-ին թուրքիային առաջադրած հայկական և վրացական հողերի պաշտոնական պահանջով: Եվ մեծ հույսերի հետ բերնից-բերան հյուսվում էր նաև ժողովրդական երգը.

*Հայաստան երթալ կուզեմ,
Երևան տեսնալ կուզեմ,
Մասիս սարի կատարին
Դրոշակ պարզել կուզեմ:⁴*

Այնպես որ ժողովրդի երգը հնչում էր որպես պահանջատիրություն.

*Կուզենք զայն, կուզենք զայն.
Մերն է Կարսն ու Արդահան...
Կարս, Արդահանը մեզի
Պիտի շուտով դարձվի,
Որ այդ հողերն ամայի
Փոխակերպենք դրախտի:⁵*

Սակայն թուրք դիվանագետները, մոռացության մատնելով մոտիկ անցյալում օսմանյան կայսրության տիրապետության պայմաններում հայերի կրած անասելի տառապանքները, պատասխանում են. «Ոչ ոքի պարտք ունինք թուրք հողերեն և իրավունքներեն: Պիտի ապրինք իբրև պատվավոր մարդիկ, պիտի մեռնինք իբրև պատվավոր մարդիկ»:⁶ Այնինչ, ինչպես վկայում են Հայոց ցեղասպանության պատմական ստույգ փաստերը և ականատես վերապրողներից մեր գրառած, ձայնագրած, տեսագրած, ուսումնասիրած և հրատարակած 700 միավոր վկայությունները, օսմանյան թուրքիայի անցյալը երբեք էլ «պատվավոր» չի եղել:

Այնպես որ հայրենադարձները գալիս էին Արևելյան Հայաստան նաև իրենց կորցրած Երկրի արդարահատույցի մեծ հույսերով:

³ Անդ, էջ 202:

⁴ Անդ:

⁵ Անդ, էջ 204:

⁶ Լազեան Գաբրիէլ, *Հայաստան եւ Հայ դատը (Վավերագրեր)*, Գահիրէ, 1946, էջ 372-373:

Սակայն այլ էին Հայրենիքում նրանց սպասող իրական կյանքի պայմանները: Միջերկրական ծովի բարեխառն ափերից դեպի կլիմայական շեշտակի փոփոխություններ ունեցող Հայրենիքը սոսկ աշխարհագրական տեղաշարժ չէր հայրենադարձների համար: Ետպատերազմյան համընդհանուր դժվարությունների հետ միասին, այն նախ և առաջ ենթադրում էր հասարակական-քաղաքական կյանքի նոր` սոցիալիստական կացութաձեւ իր արտասովոր համակարգով և կամայական օրենքներով, որոնք հաճախ անհասկանալի և անըմբռնելի էին նորեկ հայերին:

Հայրենադարձները դեռ հազիվ սկսել էին ընտելանալ կյանքի նոր պայմաններին, երբ 1937 թ. սարսափները կրկնվեցին նաեւ 1949 թ.: Հայրենադարձներից շատ-շատերին, միլիոնավոր այլ անմեղների հետ աքսորեցին Սիբիր: Եթե երիտթուրքերը Հայոց ցեղասպանության ժամանակ հայերին բռնի տեղահանում էին, աքսորելով սիրիական ամենակիզիչ անապատները, ապա` բռնակալ Ստալինի և Լավրենտի Բերիայի խելացնոր հրամաններով նրանց աքսորում էին Սովետական Միության ամենադաժան սիբիրյան սառցակալած տափաստանները` վիթխարի ծառեր սղոցելու և այդ վայրերում քաղաքներ կառուցելու:

Մեջբերենք մի հատված 1946 թ. Լիբանանից հայրենադարձ, Երևանի պետական համալսարանում անգլերեն լեզվի դասախոս, բռնադատված Ասատուր Մախուլյանի (ծնվ. 1911 թ., Մուսա լեռ) հաղորդած վկայությունից, որը մենք գրի ենք առել 1998 թ. Երևանի Նորքի I զանգված թաղամասից.

«...Ի դեպ ասեմ, որ [Ներգաղթի ժամանակ] Բաթումիում հինգ անգամ իմ գրականությունը ստուգել էին, օտար լեզվով բառարաններս թերթել էին: Գրավոր թեմաներ ունեի կատարած «Ամերիկյան դեմոկրատիան», «Շվեյցարական դեմոկրատիան», «Սովետական դեմոկրատիան»: Դրանք բռնագրավել էին: Իսկ հարցաքննության ժամանակ տեսնեմ` դրանք սեղանի վրա են: Ինձ հարցրին. - Ո՞վ է գրել սրանք:

- Սրանք իմ գրած համալսարանական ուսումնասիրություններն են:

Հարցաքննող չեկիստն ասաց. - Էդ ինչպես է, որ անգլերեն լավ գիտեք ու անգլիական լրտես չեք եղել:

Ինձ ութը ամիս դատաքննության տակ պահեցին: Վկա, ապացույց` չկա: Հայտարարեցին.

- Բանտարկյալ կալանավորը քաղաքական լրտես է, հակաքաղաքական պրոպագանդ է արել, պահանջում եմ հինգ տարի կալանք:

Հետո ինձ հարցրին. - Դուք խոսք ունե՞ք:

Ասի. - Այո՛, էդ մարդը սուտ է խոսում, ո՛չ փաստ ունի, ո՛չ վկա: Նա պետական դավաճան է: Ես պահանջում եմ տասը տարի կալանք:

Ջարմացան իմ համարձակության վրա: Դատավորի երկու կողմը ատենակալներ կային, որոնք օգոստոսյան շոգից թմրել, քնել էին: Նա բրթեց դրանց՝ արթնացան: Ես ասի. - Ա՛յ, հիմա արդարությունը արթնացավ: Հիմա արդարություն կլինի, և ես ազատ կարձակվեմ:

Գնացին, որոշեցին, եկան հայտարարեցին. - Հինգ տարի կալանք, երկու տարի ծայնազրկություն:

Դատից հետո ինձ տարան բերդ, կրկեսի մոտ: Տարան մի փոքր սենյակ: Երեսուն հոգի մեջը՝ կողք-կողքի պառկած: Մի կտոր հաց, մի քիչ ջրիկ բորչչ էին տալիս: Մի ամիս մնացի: Երբ անունս կարդացին, ասացին. - Քեզ էլ Ռուսաստան ենք դրկում:

Ես ասացի. - Ես ռուսերեն չգիտեմ, ու ՞ր եք դրկում Ռուսաստան:

Պատասխան չտվեց: Մի գիշեր պողպատյա վագոնների մեջ մտցրին, երեսուներեք հոգի էինք, որից տասնվեցը գողեր էին...»:⁷

Հայրենադարձների սոցիալ-հոգեբանական ընտելացումն իրենց համար միանգամայն արտասովոր քաղաքական-տնտեսական նոր հանգամանքներում և այդ իրավիճակների հետ կապված հոգեբանական բազում բարդույթները հաղթահարելու նրանց դիմագրաված դժվարությունները գեղարվեստական գույներ պատկերներով են ներկայացված հայրենադարձներից մեր գրառած բանահյուսական նյութերի «Նոր էկոլները» բաժնի ողբերգազավեշտական գրույցների մեջ, որոնց վերնագրերն իսկ խոսուն են ու պատկերավոր. «Նոր էկոլը և գողը», «Նոր էկոլը և փոսը», «Նոր էկոլը և միլիցա Անդրեն», «Նոր էկոլը և ագիտատորը», «Նոր էկոլի գրած նամակը», «Նոր էկոլը հերթի մեջ», «Նոր էկոլը և ավազակը», «Նոր էկոլը և Հայր-Ստալինը», «Նոր էկոլը ԿաթեՔե-ի մեջ» և այլն:⁸

Հակառակ երկրում ստեղծված քաղաքական, կենցաղային և բարոյահոգեբանական կարգի դժվարություններին, հայրենադարձներից շատ-շատերը, օգտվելով Հայրենիքում ձրի ուսում-կրթություն ստանալու հնարավորությունից, լծվեցին ստեղծագործ աշխատանքի: Նրանք սկսեցին եռանդուն կերպով սովորել ցերեկային և գիշերային ուսումնական հաստատություններում՝ զարգացնելով իրենց միջնակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակը: Նրանցից շատերը տարիների

⁷ Սվազյան Վերժինե, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 308:

⁸ Սվազյան Վերժինե, *Կիլիկիա*, էջ 111-117:

ընթացքում դարձան համայնական դաշտերի աշխատանքի հերոսներ, գիտության, արվեստի և մշակույթի անվանի գործիչներ: Նրանք իրենց աշխատասիրությամբ և դժվարությունները հաղթահարելու տարագիրներին հատուկ կենսափորձով և ջանասիրությամբ իրենց կորցրած Երկրի ընդամենը 1/10 մնացած տարածքի վրա սկսեցին կառուցել հայրենի տունն ու շենք՝ Երևանի շրջակայքում հիմնադրելով իրենց երբեմնի բնօրրանի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Ջեյթուն, Նոր Արեշ, Նոր Արաբկիր, Նոր Մարաշ, Նոր Այնթապ, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Մուսա լեռ և այլն) բարեկարգ առանձնատներով և մշակված տնամերձ այգիներով: Սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում էր մխալ նրանց հիշողության մեջ, և կորցրած Երկրի երազանքը հոգու կանչ դարձած ժողովրդական երգի ձևով ավանդվում էր սերնդից սերունդ.

*Երբ որ բացվին դռներն հույսի,
Եվ մենք Երկիր դառնանք կրկին,
Չքնաղ երկիր մեր Հայրենյաց,
Որ բռնությամբ առին մեզնից:*

*Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ,
Ցանկամ տեսնել իմ Կիլիկիան.
Վանքեր, բերդեր հոնտեղ շա՛տ կան:*

*Երբ որ լուծվի Հայոց Հարցը,
Եվ մեզ տրվի նախնյաց հողը,
Մենք կվարենք մեր արտերը,
Կշենացնենք մեր գյուղերը:*

*Ցանկամ տեսնել Սասուն ու Վան,
Ջեյթուն, Հաճըն և Մուսա Դաղ,
Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ,
Կծաղկացնենք մենք անպայման:⁹*

Հայրենաբնակ հայրենադարձներից ժողովրդագիտական նյութեր և պատմական հիշողության փաստավավերագրական վկայություններ սկսել ենք գրի առնել տակավին 1955 թվականից՝ արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ: Տարիների ընթացքում գրի ենք առել տարբեր սեռերի և տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների հաղորդած ժողովրդական բանավոր ավանդության նշխարները.

1. Արձակ բանահյուսություն – Հեքիաթներ, առակներ, բարոյախրատական, կրոնական, սնահավատական, զավեշտական,

⁹ Սվազլյան Վերժինե, *Հայոց ցեղասպանություն*, էջ 454:

տեղանվանական զրույցներ նաև Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած վկայություններ:

2. Չափածո բանահյուսություն – Օրորոցայիններ, մանկական, սիրային, հարսանեկան, տոնական, ծիսական, պանդուխտի, կենցաղասյին, զավեշտական, ինչպես նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմական բնույթի հայերեն և թուրքալեզու երգեր՝ զորահավաքի, զինահավաքի, բանտարկյալի, տեղահանության, ջարդերի, կոտորածների, որդեկորույս մայրերի, որբի և որբանոցի, ազատագրական պայքարի, հայրենասիրական, հայրենադարձության և կորցրած երկրի կարոտախտի վերաբերյալ երգեր:

3. Բանաձևային բանահյուսություն – Առածներ, ասացվածքներ, խրատներ, օրհնանքներ, անեծքներ, հանելուկներ, շուտասելուկներ, դարձվածներ, ժողովրդական աղոթքներ:

4. Ազգագրական ծեսեր – ծնունդ, հարսանիք, թաղում:

Արևմտահայ հայրենադարձների հիշողության մեջ անթեղված բանահյուսական, ազգագրական, բարբառագիտական և ցեղասպանության վերաբերյալ սկզբնաղբյուրային այս նյութերը (շուրջ 10.000 միավոր) մենք ոչ միայն 50 տարիների ընթացքում գրառել, ձայնագրել, տեսագրել ու վերծանել ենք, այլև գիտական տարբեր տեսանկյուններով ուսումնասիրել և հրատարակել ենք մեր 23 մեծ ու փոքր, տարբեր լեզուներով թարգմանված գրքերով:

Երկարատև և հետևողական ուսումնասիրությունից պարզվել է, որ ժամանակի և տարածության մեջ փոփոխություններ են կատարվել ոչ միայն բանահյուսական նյութերի և բանասացների քանակական ցուցանիշների մեջ, այլև՝ ժանրերի ներսում և ժանրերի միջև զգացվում են քայքայման, տարալուծման և փոխակերպման որոշ որակական երևույթներ:

Հայրենաբնակ հայրենադարձներն անցյալում պատմական իրադարձությունների բերումով Սփյուռքի տարբեր գաղթօջախներում գոյատևել են տարբեր ազգերի հետ (թուրքեր, արաբներ, հույներ, հրեաներ, ֆրանսիացիներ, իտալացիներ, անգլիացիներ և այլն), ուստի բնականաբար նրանց բանավոր խոսքը կրել է որոշ ազդեցություններ և փեխազդեցություններ, սակայն բուն բարբառներն ու արևմտահայ գրական լեզվի խոսակցականը և նրանց քերականական կառուցվածքը մնացել էին կայուն, քանի որ օտարության մեջ մայրենի լեզուն եղել է նրանց ազգային ինքնության և հայապահպանման միակ միջոցը:

Եթե անցյալում որոշիչ գործոնը ժամանակն էր, իսկ օտար շրջապատի ներգործությունը՝ երկրորդական պայման, ապա Հայաստան տեղափոխված բարբառների համար նոր, հարազատ միջավայրի ազդեցությունն է դարձել որոշիչ, իսկ ժամանակը՝ երկրորդական պայման:

Հայրենիքում համատարած գրագիտության և մասնագիտական զարգացման, գրական, համազգային պետական արևելահայերենի հեղինակավոր և անդինադրելի ներգործության շնորհիվ (դպրոցներ, ուսումնարաններ, համալսարաններ, մամուլ, ձայնասփյուռ, հեռատեսիլ և այլն) պատմականորեն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում (3-4 տասնամյակներ) նրանց խրթին բարբառներն ու արևմտահայ խոսակցական աստիճանաբար իրենց տեղը զիջել են գրական արևելահայերենին կամ տվյալ տեղավայրի բարբառին:

Մինչև 1980-ական թվականները հայրենադարձ ընտանիքներում նկատելի էր բանավոր խոսքի բազմաշերտայնությունը՝ մեծահասակները դեռևս միմյանց հետ շարունակում էին խոսել իրենց բնիկ բարբառներով, միջին տարիքի մարդիկ՝ գրականախառն հայերենով, իսկ Հայաստանում ծնված և ուսում ստացած նոր սերնդին գրեթե անհասկանալի էին ավագների բնիկ բարբառները: Այժմ նոր սերունդները տիրապետում են արդի գրական հայերենին և օտար լեզուներին, բանահյուսական անցյալի ավանդներից ևս գրեթե ոչինչ չեն պահպանում, բայց փոխարենը հարստանում են ազգային և համաշխարհային մշակույթի արժեքներով:

Այսպիսով, Հայրենիքում ստացած բարձրագույն մասնագիտական զարգացման, գիտատեխնիկական հարաճուն տեղեկատվության, հասարակական արտադրական հարաբերությունների բովում աստիճանաբար ձևավորվել և կազմավորվել են հայրենաբնակ հայրենադարձների սոցիալական նոր որակը, հոգեգիտակցական աշխարհը և մտածելակերպը: Նրանց մշակութային զարգացումը և հասարակականորեն հարմարվելու կարողությունը՝ ընթանալով մերձեցման ուղղությամբ, դառնում է հայ ժողովրդի ազգային ինքնահաստատման և ամբողջականության բաղկացուցիչ մասը:

Ուշագրավ է այն, որ ներկայումս ևս նկատվում են նոր հայրենադարձության միտումներ: Շատ ու շատ սփյուռքահայեր Հայաստանում ոչ միայն ներդրումներ են կատարում, նոր ձեռնարկություններ ստեղծում, այլև տներ, առանձնատներ են գնում կամ կառուցում՝ մասամբ կամ հիմնովին հայրենիքում բնակություն հաստատելու նպատակով: Քանի որ իրենց ապրած

երկրներում առկա կյանքի պայմաններն ու այլասերման վախը ստիպում են նրանց մտածել նաև իրենց զավակների ապագայի, նրանց հայեցի դաստիարակության և ազգային ինքնության պահպանման մասին:

2005 թ. Դեր Զորի անապատում գրանցել են մի վկայություն, որտեղ պատմվում է 1915 թ. Հայոց ցեղասպանության օրերին արաբ անապատականների մոտ ապաստան գտած, իրենց մայրենի լեզուն և հավատքը փոխած վերապրողների երրորդ և չորրորդ սերնդի ներկայացուցիչների մասին: Նրանք նույնպես արաբերեն են խոսում, բայց իրենց ականա օտարացած երբեմնի հայ տատիկների և պապիկների ազգային ինքնությունը դեռ պահպանել են: Նրանք լսել էին, որ հայերը երկիր ունեն Հայաստան անունով, որ թուրք-ազերիների ձեռքից Ղարաբաղը ազատագրված է, և այնտեղ գնացող, բնակություն հաստատողին կառավարությունը հող է տալիս, որ վարեն, փող է տալիս, որ տուն կառուցեն: Այնպես, որ սիրիական անապատներում բազմահազար ծուլված, օտարացած, բայց իրենց ազգային ինքնությունը տակավին պահպանած հայեր կան, որոնք այդ մասին բացահայտ վարանում են արտահայտվել: Ուստի Հայաստանի և Ղարաբաղի մեջ նրանց վերաբնակեցումը կազմակերպելը մեր կառավարության առաջնահերթ խնդիրներից է:

Քանի որ ազգը հարատևում է միայն իր հայրենի հողի վրա: Ժողովրդի գոյությունն իր հողից դուրս` վաղ թե ուշ դատապարտված է անէացման...

Ինչպես ամեն մի հայի աչքերի մեջ առկա է կորցրած երկրի թախիծը, նույնպես և ամեն հայի ճակատին գրված է Ներգաղթի գաղափարը: